ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2023 թվականի N -Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երկու ամիս ժամկետով՝ 2023 թվականի ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը:
2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղա-քացիների՝

1) ռազմական ունակությունների կատարելագործման,

2) մասնագիտական վերապատրաստման,

3) մասնագիտական պատրաստման,

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպա-ների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավել մինչև 953 քաղաքացու, որոնցից 476–ը՝ կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի, 25-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 452-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:
4. Սահմանել, որ վարժական հավաքներին ներգրավվում են.

1) մոտոհրաձգային մասնագիտություններով մինչև 500 պահեստազորային, որոնցից՝ 27 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մայիսի 12-ը ներառյալ, 215 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 19-ից մայիսի 13-ը ներառյալ, 258 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 10-ից հունիսի 3-ը ներառյալ,

2) հրթիռա-հրետանային մասնագիտություններով մինչև 182 պահեստազորային, որոնցից՝ 10 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մայիսի 12-ը ներառյալ, 172 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 10-ից հունիսի 3-ը ներառյալ,

3) հակաօդային պաշտպանության մասնագիտություններով մինչև 59 պահեստազորային, որոնցից՝ 23 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մայիսի 12-ը ներառյալ, 22 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 10-ից հունիսի 3-ը ներառյալ, 14 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 17-ից հունիսի 10-ը ներառյալ,

4) կապի մասնագիտություններով մինչև 12 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 17-ից հունիսի 10-ը ներառյալ,

5) հետախուզական մասնագիտություններով մինչև 42 պահեստազորային, որոնցից՝ 30 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մայիսի 12-ը ներառյալ, 12 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 3 - 27-ը ներառյալ,

6) ինժեներական մասնագիտություններով մինչև 89 պահեստազորային, որոնցից՝ 4 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մայիսի 12-ը ներառյալ, 85 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 17-ից հունիսի 10-ը ներառյալ,

7) տեխնիկական մասնագիտություններով մինչև 32 պահեստազորային, որոնցից՝ 14 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մայիսի 12-ը ներառյալ, 18 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 10-ից հունիսի 3-ը ներառյալ,

8) թիկունքային մասնագիտություններով մինչև 37 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մայիսի 12-ը ներառյալ:

5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ պահեստազորային քաղաքացիների ծանուցման գործընթացը պատշաճ իրականացնելու նպատակով ապահովել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների կողմից կցագրված և վարժական հավաքներին կանչման ենթակա պահեստազորայինների՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվելու վերաբերյալ տեղեկատվության ստացումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան